



## ՄԱՍՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### Հայաստանի վիճակագրությունը ԵՄ չափանիշներին ավելի ներդաշնակեցնող ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագիրը

“Աջակցություն Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությանը ԹՎԻՆԻՆԳի միջոցով” ԵՄ կողմից ֆինանսավորվող ծրագիրը ամփոփում է իր աշխատանքը Հայաստանում: ՀՀ ազգային վիճակագրական ծառայության և ԵՄ ԱՊ փորձագետների միջև երկու տարվա ընթացքում արդյունավետ ծրագրի իրականացումը կնշվի 2013 թ. փետրվարի 13-ին՝ ծրագրի փակման արարողությանը, որի տեղի կունենա “Էրեբունի բիզնես կենտրոնի”՝ Էրեբունի նիստերի դահլիճում: ԹՎԻՆԻՆԳ ծրագիրը նպաստեց Հայաստանի վիճակագրության մոտարկմանը միջազգային չափանիշներին՝ մի շարք կարևոր վիճակագրական ոլորտների համար: ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի ամենանշանակալից արդյունքները հետևյալն են՝

- Ներդրվեց մատչելի ՀՀ ԱՎԾ-ի ARMSTATBANK.AM տվյալների բազան, որը հասանելի է հանրությանը
- Հասանելի դարձան որակի հոչակագրերը բոլոր վիճակագրական արտադրանքների համար
- Արձանագրվեց 20 տոկոս ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության նվազում Հայաստանի ձեռնարկությունների համար
- Բարելավվեց ազգային հաշիվների ընդգրկումը և այդպիսով ՀՆԱ-ի աճի գնահատումները
- Մշակվեց Հայաստանում առաջին անգամ իրականացվելիք գյուղատնտեսական համատարած հաշվառան համար անհրաժեշտ մեթոդաբանությունը
- Հայաստանի սպառողական գների ինդեքսը ներդաշնակեցվեց ԵՄ չափանիշներին, և այն կներդրվի 2014 թ
- Մշակվեց մեթոդաբանություն կազմակերպություններում և հանրային մարմիններում նոր S2S օգտագործման վիճակագրության վարման համար

Ծրագրի արդյունքները կներկայացվեն ավելի մանրամասնորեն լրագրողների հետ հանդիպման ընթացքում :

ՀՀ ազգային վիճակագրության և Դանիայի վիճակագրության, ինչպես նաև Գերմանիայի, Ֆինլանդիայի, Լատվիայի, Լիտվայի և Շվեդիայի վիճակագրության ծառայությունների միջև համագործակցության 2 տարվա ծրագիրը ֆինանսավորվել է Եվրամիության կողմից՝ € 1,000,000 բյուջեի սահմաններում:

**Օրը և ժամը՝ 2013 թ. փետրվարի 13-ին, ժամը 10:30**  
**Վայրը՝ Էրեբունի Պլազա Բիզնես կենտրոն – “Էրեբունի դահլիճ”**  
**Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել՝**

Թոմաս Բի, ԹՎԻՆԻՆԳի մշտական խորհրդատու, Դանիայի Վիճակագրական Ծառայություն  
[tbi@dst.dk](mailto:tbi@dst.dk), tel. +374-95-595 394

Անահիտ Սաֆյան, Միջազգային Վիճակագրական Համագործակցության բաժնի պետ, ՀՀ ԱՎԾ [info@armstat.am](mailto:info@armstat.am),  
հեռ՝ +374-10-524 460

Ինա Յանկուլովա, ՀՀ Եվրապատվիրակության, Մամուլ և տեղեկատվություն, [ina.iankulova@eeas.europa.eu](mailto:ina.iankulova@eeas.europa.eu)